Սոցիալական N1

ՏԵՂԵԿԱՆՔ

Նախարարական սոցիալական կոմիտեի 19.06.2014թ. կայանալիք նիստի օրակարգի 1-ին կետի (նախագիծ N 1) վերաբերյալ

Նախարարական սոցիալական կոմիտեի 19.06.2014թ. կայանալիք նիստի օրակարգի 1-ին կետի (նախագիծ N 1)՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1414-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ և ՀՀ 2014 թվականի պետական բյուջեում վերաբաշխում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

Առաջարկում ենք Նախագծի անվանումը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1414-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»:

Նախագծի նախաբանում առաջարկում ենք «23-րդ հոդվածի 3-րդ մասին» բառերից հետո ավելացնել «և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 375-Ն որոշման 6-րդ կետին» բառերը:

Նախագծին կից հավելված 1-ում «01.ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ» տողից հետո ավելացնել տող, նշելով «ՀՀ կառավարություն» բառերը և համապատասխան գումարները:

Անհրաժեշտ է հավելված 2-ը համապատասխանեցնել ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1414-Ն որոշմամբ հաստատված N 11 հավելվածի N 11.9 և N 12 աղյուսակների ձևաչափերին և ներկայացնել առանձին հավելվածների տեսքով համապատասխան փոփոխություն կատարելով Նախագծի 1-ին կետում: Ծառայությունների մատուցողի անվանումը տողում «ՀՀ առողջապահության նախարարություն» բառերի փոխարեն առաջարկում ենք նշել «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն ընտրված կազմակերպություն» բառերը: Առաջարկում ենք նաև լրացնել ոչ ֆինանսական ցուցանիշները:

18.06.14թ

Առաջարկում ենք Նախագծին կից հավելված 3-ով ներկայացված գնումների պլանի «Կոդը սյունակում» նշված «79824000/1» թիվը փոխարինել «79824000/2» թվով: